ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/5-1

ք. Երևան «29» նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ, ի դեմս գործադիր տնօրեն Հ.Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Անուշ Ղազարյան Խորենի Ա/Ձ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Տպագրական ծառայություններ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օր է համարվում Պատվիրատուի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու օրը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 35749000 (երեսունհինգ միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին: Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

---

[18]Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

[18.1] Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

---

[19] *Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[20] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	Անուշ Ղազարյան Խորենի Ա/Ձ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011	Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան փ., Շ. 163, Բն. 29
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ 32535704
«Արդշինբանկ» ՓԲԸ	<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000	Հ/Հ՝ 1150010946366310
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 1
«[illegible]» նոյեմբերի 2022թ. կնքված
ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/5-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ռվերով ստեսված աբաժնի ամարը	Գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Չ/Մ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատուցման	
						Հասցե	Ժամկետներ
1.	79821170/18	Տպագրական ծառայություններ	Նկարները և տեխնիկական բնութագիրը կից ֆայլում	դրամ	35749000	Ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու Օրվանից հաշված 20 օրացուցայի ն օր հետո /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/

Նկար	Ապրանքի անվանում	Անհրաժեշտ պարամետրեր	Քանակ
		Պարամետրեր: Վերնազգեստը /հուդի/ կարվում է փափուկ բամբակյա տրիկոտաժե կտորից՝ 200 գ/մ2 մակերեսային խտությամբ: Գործվածքի բաղադրությունը 65% բամբակ, 35 % պոլիէսթեր: Վերնազգեստը երկարաթեւ է, վզի հատվածում միացված գլխաձածկով: Գլխաձածկից կախված թելերը հուդիի նույն գույնից:	
	Վերնազգեստ հուդի	Կտորի գույնը ըստ կցված նկարի, որի երանգը պարտադիր պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Վերնազգեստի ստորին մասը եւ թեւքերի վերջավորությունը կարվում են համապատասխան գույնի Պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Վերնազգեստի կրծքավանդակի ողջ հատվածով եւ ետնի ձախանկյունային հատվածում մաղային տպագրության եղակակով տեղադրվում են տրամադրված դիզայնները: Դրանց ֆայլերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից: Վերնազգեստի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Ներսի կողմում՝ ներքեւից 15սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը եւ խնամքի վերաբերյալ	1000

		հրահանգ: Տպագրություն: դիմացի հատված - 25*15 Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ տոպրակով, մեկ տոպրակի մեջ՝ 1հատ: **Չափսերը:** XS - 200 հատ Տպագրություն՝ 20*15; 4*10 S - 200 հատ Տպագրություն՝ 20*15 4*10 M - 200 հատ Տպագրություն՝ 25*18 4*10 L - 200 հատ Տպագրություն՝ 25*18 4*10 XL - 100 հատ Տպագրություն՝ 28*20 4*10 XXL - 100 հատ Տպագրություն՝ 28*20 4*10	

	Շապիկ /սպիտակ/	Պարամետրեր: Շապիկը կարվում է բարձրորակ Պենյա Պիկե կտորից՝ 230գ/մ2 մակերեսային խտությամբ: Գործվածքի բաղադրությունը 95% բամբակ, 5 % պոլիէսթեր: Կտորը պետք է ունենա ձգվողականություն մարմինը հարմարավետ գրկելու համար: Շապիկը երկարաթեւ է, կտորի հիմնական գույնը սպիտակ: Օձիքը կլոր է, կարվում է թեքերի դիզայնով և կտորով: Շապիկի կրծքավանդակի հատվածում եւ մեջքի հատվածում 1 գույնանի մաղային տպագրության եղանակով տեղադրվում է նշված դիզայնը: Շապիկի դիմացի աջ հատվածում փակցվում է պիտակ՝ պատվիրատուի կողմից տրամադրված դիզայնի տպագրությամբ: Վերնազգեստի թեւքերի վերջավորությունը կարվում են համապատասխան գույնի Պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Շապիկի ներսի կողմում՝ ներքեւից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի	250

		մեջ նշվում են արտադրողի տվյալները /վավերապայմանները, հագուստի չափը, համառոտ նկարագիրը եւ խնամքի վերաբերյալ հրահանգ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ տոպրակով, մեկ տոպրակի մեջ՝ 1հատ: XS - 50 հատ Տպագրություն՝ 18*18 ; 4*10; 18*18; 2.5*3.5 S - 50 հատ Տպագրություն՝ 18*18 ; 4*10; 18*18; 2.5*3.5 M - 50 հատ Տպագրություն՝ 20*20; 4*10; 20*20; 2.5*3.5 L - 50 հատ Տպագրություն՝ 20*20; 4*10; 20*20 3*4 XL - 50 հատ Տպագրություն՝ 23*23; 4*10; 23*23 3*4	

	Շապիկ	Պարամետրեր: Շապիկը կարվում է բարձրորակ Պենյա Պիկե կտորից՝ 230գ/մ2 մակերեսային խտությամբ: Գործվածքի բաղադրությունը 95% բամբակ, 5 % պոլիէսթեր: Կտորը պետք է ունենա ձգվողականություն մարմինը հարմարավետ զրկելու համար: Շապիկը երկարաթեւ է, կտորի հիմնական գույնը մուգ մանուշակագույն, որի երանգը պարտադիր պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Օձիքը կլոր է, կարվում է թևքերի դիզայնով և կտորով: Շապիկի կրծքավանդակի հատվածում եւ մեջքի հատվածում 1 գույնանի մաղային տպագրության եղանակով տեղադրվում է նշված դիզայնը: Շապիկի դիմացի աջ հատվածում փակցվում է պիտակ՝ պատվիրատուի կողմից տրամադրված դիզայնի տպագրությամբ: Վերնազգեստի թեւքերի վերջավորությունը կարվում են համապատասխան գույնի Պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Շապիկի ներսի կողմում՝ ներքեւից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները /վավերապայմանները, հագուստի չափսը, համառոտ նկարագիրը եւ խնամքի վերաբերյալ հրահանգ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ տոպրակով, մեկ տոպրակի մեջ՝ 1հատ: XS - 75 հատ Տպագրություն՝ 18*18 ; 4*10; 18*18; 2.5*3.5 S - 75 հատ Տպագրություն՝ 18*18 ; 4*10; 18*18; 2.5*3.5	550

	M - 150 հատ Տպագրություն՝ 20*20; 4*10; 20*20; 2.5*3.5 L - 150 հատ Տպագրություն՝ 20*20; 4*10; 20*20 3*4 XL - 50 հատ Տպագրություն՝ 23*23; 4*10; 23*23 3*4 XXL - 50 հատ Տպագրություն՝ 23*23; 4*10; 23*23 3*4	
Ձմեռային գլխարկ	**Մատերիալը:** 90% ակրիլ, 10% սպանդեքս, լոգոն՝ ասեղնագործած /8*3.5սմ/ լոգոյի գույնը՝ սպիտակ **Չափերը:** ստանդարտ **Գույնը:** մուգ կապույտ կամ մանուշակագույն (անհրաժեշտ է համաձայնեցնել պատվիրատուի հետ)	200

		Մատերիալը: 90% ակրիլ, 10% սպանդեքս, լոգոն՝ ասեղնագործած /8*3.5սմ/, լոգոյի գույնը՝ սպիտակ**Չափերը:** ստանդարտ**Գույնը:** մուգ կապույտ կամ մանուշակագույն (անհրաժեշտ է համաձայնեցնել պատվիրատուի հետ); դիմացի ծալվող հատվածի բարձրությունը՝ 5սմ, ծալվող հատվածի գույնը՝ վարդագույն	200
	Գոտի պայուսակ	**Պարամետրեր:** Պոլիէսթեր 100%, անջրաթափանց կտոր, գունավոր տպագրություն, պայուսակի գոտկատեղին կապվող ռետինե/ռեզինե որակյալ գոտի (անհրաժեշտ է համաձայնեցնել պատվիրատուի հետ), գոտիի գույնը՝ սև, շղթայի գույնը՝ սև և մանուշակագույն՝ ըստ դիզայնի, գոտիի հաստությունը՝ 4-5սմ, գոտիի միացման հատվածը պլաստմասե կարաբին: Գոտիի ընդհանուր երկարությունը՝ 80սմ, որի վրա պետք է տեղադրված լինի պլաստմասե հարմարանք, գոտիի երկարությունը մեծացնել կամ փոքրացնելու նպատակով: Դիմացի լոգոյի տպագրման չափերը՝ 15սմ լայնություն և 8սմ երկարություն: Աջ և Ձախ հատվածները՝ ինչպես նկարում, ունեն ուռուցիկություն և	200

		խաչաձև կար, որի վրա էլ 2 գույնով տպագրված են լոգոտիպեր: **Չափը:** 15*25, խորությունը՝ 7սմ, կլորավուն	
	Պայուսակ	**Պարամետրեր:** 100% պոլիէսթեր, անջրաթափանց, բարձր որակի կտոր: Կողային հատվածներց ձգող թելեր, վերևի հատվածում ձգվելու միջոցով փակվելու հնարավորություն, ներքևի աջ և ձախ հատվածներում մետաղյա շրջանակներով անցքեր, որոնց միջով անցնում են կապիչ թելերը: Թելերի գույնը՝ սպիտակ, պայուսակի գույնը՝ մանուշակկագույն, դիզայնը՝ ըստ տրամադրված ֆայլի **Չափը:** 45 x 33 սմ **Տպագրություն:** 15*28; 5*10	500

	Կտորից պայուսակ /սպիտակ/	**Պարամետրեր:** Կտորի տեսակը՝ 100% բամբակ, երկկողմանի տպագրված դիզայնով **Չափը:** 30 x 45սմ **Կանթերի չափը:** 2.5 x 50սմ	800
	Կտորից պայուսակ /մուգ կապույտ/	**Պարամետրեր:** Կտորի տեսակը՝ 100% բամբակ, երկկողմանի տպագրված դիզայնով **Չափը:** 30 x 45սմ **Կանթերի չափը:** 2.5 x 50սմ	500

	Ժիլետ սև գույնի	**Պարամետրեր:** ձմեռային անթև վերարկու բոլոնյա B20 բարձր որակի կտորից, 2 կողային գրպաններով, նեղ զարդակարերով, որոնք պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ներսի հետվածում հաստ շերտով սինտեպոն և վրայից գործած աստառ: Շղթան՝ բարձր որակի:Առջևի և ետևի հատվածներում տպագրություն՝ ըստ տրված դիզայնի:**Չափերը.** S - 50 հատ Տպագրություն՝ 10*6, 23*11, 3*3, 4*3M - 50 հատ Տպագրություն՝ 10*6, 23*11, 3*3, 4*3L - 50 հատ Տպագրություն՝ 13*9, 26*15, 3*3, 4*3XL - 50 հատ Տպագրություն՝ 13*9, 26*15, 3*3, 4*3	200

	Վերարկու ձմեռային	**Պարամետրեր:** ձմեռային վերարկու բոլոնյա B20 բարձր որակի կտորից, 2 կողային գրպաններով, օձիքին կարված գլխաձածկով, նեղ զարդակարերով, որոնք պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ներսի հետվածում հաստ շերտով սինտեպոն և վրայից գործած աստառ: Շղթան՝ բարձր որակի, թևերի վերջույթը ռեզինե: Առջևի և ետևի հատվածներում տպագրություն՝ ըստ տրված դիզայնի: **Չափերը.** XS - 100 հատ Տպագրություն՝ 10*6, 23*11, 5*10 S - 100 հատ Տպագրություն՝ 10*6, 23*11, 5*10 M - 200 հատ Տպագրություն՝ 10*6, 23*11, 5*10 L - 150 հատ Տպագրություն՝ 13*9, 26*15, 7*12 XL - 100 հատ Տպագրություն՝ 13*9, 26*15, 7*12 XXL - 50 հատ Տպագրություն՝ 13*9, 26*15, 7*12	700

ԳՆՈՐԴ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

Անուշ Ղազարյան Խորենի Ա/Ձ

Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,
Բաբաջանյան փ., Շ. 163, Բն. 29
ՀՎՀՀ 32535704
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ՝ 1150010946366310

/ստորագրություն/

Հավելված N 2
«29» նոյեմբերի 2022թ. կնքված
ՀՀՀ-ՀՄԱՇՁԲ-22/5-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված գնափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	79821170/18	Տպագրական ծառայություններ	0	0	0	0	0	0	0	0	0	0	35749000	35749000	35749000

ԳՆՈՐԴ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

Անուշ Ղազարյան Խորենի Ա/Ձ

Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,
Բաբաջանյան փ., Շ. 163, Բն. 29
ՀՎՀՀ 32535704
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ՝ 1150010946366310

/ստորագրություն/